Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«30» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2013 Թ. N 27-Ա ՀՐԱՄԱՆԻՑ

ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 2-րդ մասով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում անցկացված ծառայողական քննության արդյունքներով ներկայացված եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Հ. Հարությունյանի միջնորդությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ծառայողական պարտականություններն ոչ պատշաճ կատարելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կարգապահական կանոնակարգը հաստատելու մասին» N 999-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետի գ) ենթակետի պահանջները խախտելու՝ ծառայություն իրականացնելիս ինքնաձիգը վայր դնելու և պահակետում քնելու համար Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պահպանության ապահովման բաժնի կրտսեր մասնագետ Արա Ավետիքի Գևորգյանի նկատմամբ կիրառել ծառայությունից ազատում կարգապահական տույժը և 2013 թվականի սեպտեմբերի 30-ից նրան ազատել քրեակատարողական ծառայությունից:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ